

Ա. Ա. ԲՈԶՈՅԱՆ

*Գարեգին Ա կենսորոնի փնտրեն**Պարտական գիտությունների դոկտոր*

ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ-ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՉԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Հայոց Եկեղեցին, բացի իր հոգևոր առաքելությունից, իրականացրել է նաև ուսումնամանկավարժական և գիտական լայնածավալ գործունեություն: Մայր Աթոռի գիտական առաքելության ամենավաղ վկայությունը Էջմիածնի հայագիտական դպրոցի հրատարակած բազմափաթեթի աշխատություններն են, որոնք իրենց ուրույն փնտրումն են հայ պարամաբանասիրական հեղափոխությունների անդամադրում:

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն իր գահակալության առաջին տարում իսկ ձեռնամուխ եղավ Հայաստանում և Մայր Աթոռում հայագիտական հեղափոխությունների հովանավորությանը ու գիտական հեղափոխությունների կենտրոնի հիմնադրման գործին: Այդ քայլով Նորին Սրբությունն իր առջև առաջին հերթին նպատակ դրեց փառաբանության միջոցով աջակցել հասարակագիտության բնագավառում արժեքներ ստեղծած գիտնականներին և նրանց ներգրավել Ս. Էջմիածնի գիտակրթական ծրագրերի մեջ: Հայոց Հայրապետը մեծ ուժեր ներդրեց Մայր Աթոռում կրթական գործը բարձր մակարդակի հասցնելու աշխատանքներում՝ դասախոսական համապատասխան կադրերով համալրելով Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, Սևանի Վազգենյան և Գյումրու հոգևոր-կրթական հաստատությունները, միևնույն ժամանակ հիմնելով և քահանայից լսարանը: Հիշյալ հաստատությունները պիտի խթանեին Մայր Աթոռում գիտակրթական գործը, նոր լիցք հաղորդեին հոգևորականության պատրաստման բարդ ու պատասխանատու աշխատանքին: Այսօրվա հրամայականների թվում Եկեղեցու կողմից կարևոր փուլ հաղթահարվեց նոր սերնդի հոգևոր դաստիարակությանը, որն իր կարևոր նպատակ էրեք ուսումնական գործի խթանմանը հանրապետության հանրակրթական դպրոցներում և Բուհերում: Վեհափառ Հայրապետի գահակալության հինգ տարիների ընթացքում ավելի ինքնուրույն սկսեց գործել նաև Օշականի դպրանոցը, ուր կազմակերպվում են զանազան գիտաժողովներ՝ նվիրված հայագիտության և մեր մշակույթի զանազան խնդիրներին:

Ս. Էջմիածինը նաև խթանեց հայագիտական գիտաժողովների կազմակերպմանը՝ համագործակցելով ՀՀ ԳԱԱ-ի հասարակական ինստիտուտների գիտաշխատողների և ԵՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Առանց Ս. Էջմիածնի ներդրումի անհնար է պատկերացնել Քրիստոնեության 1700-ամյակին նվիրված գիտաժողովները Հայաստանում և նրա սահմաններից դուրս (Հռոմ, Ս. Պետերբուրգ, Միչիգան), ինչպես նաև Հայագիտության հարցերին նվիրված միջազգային առաջին Համաժողովը: Բազմաթիվ նոր հրատարակություններ սկսեց իրականացնել Մայր Աթոռի Քարոզական կենտրոնը: Մեր Եկե-

դեցու հիմնած նման հաստատությունների շարքում կարևոր ձեռքբերումներ ունի Նյու Յորքի «Գրիգոր Զոհրապ» կենտրոնը: Համապատասխան արդյունք է ակնկալվում նաև Նյու Յորքում վերջերս բացված «Գարեգին Ա» կենտրոնից:

Գիտակրթական գործն ավելի կայուն հիմքերի վրա դնելու համար, Մայր Աթոռի Ալեք Մանուկյան թանգարանում տեղ հատկացվեց «Գարեգին Ա» հայագիտական-աստվածաբանական կենտրոնի ստեղծման համար: Կենտրոնը պաշտոնապես հիմնվեց 2000 թ. հունիսի 26-ին: Այս ծրագրի հիմնական բաղկացուցիչն էր դեռևս Վազգեն Ա Նայրապետի գահակալության շրջանից Մայր Աթոռում կազմավորված գրադարանը, որը եզակի էր Հայաստանում իր աստվածաբանական և եկեղեցագիտական գրականությամբ:

Գարեգին Բ Վեհափառը, հիմնադրելով այս Կենտրոնը, իր առջև նպատակ էր դրել Էջմիածնում ստեղծել հայագիտական-աստվածաբանական հետազոտություններով զբաղվող գիտական կենտրոն, որը կնպաստեր Հայաստանում դեռևս նոր ձևավորվող որոշ գիտաճյուղերի (Աստվածաբանություն, եկեղեցագիտություն, վավերագիտություն և կանոնագիտություն) զարգացմանը Հայաստանում: Վեհափառ Նայրապետի նպատակներից էր նաև Եկեղեցու հովանու ներքո զարկ տալ աստվածաբանական, միջնադարագիտական, կանոնագիտական և հայագիտական կրթությանը Մայր Աթոռում, դրանով իսկ նպաստել վերը թվարկված ուսումնական հաստատություններում կրթություն ստացած երիտասարդների առաջընթացին եկեղեցագիտության փարբեր բնագավառների և հասարակական գիտությունների ասպարեզում: Ծրագրի բաղկացուցիչ մասերից մեկն էլ այն էր, որ արտասահման կրթության մեկնող հոգևորականները, որոնց թիվն արդեն հասնում է շուրջ երեք տասնյակի, ավելի մոտից ծանոթանային համաշխարհային հասարակագիտության և եկեղեցագիտության նվաճումներին, շփվեին Հայոց Եկեղեցու առջև կանգնած հիմնահարցերի ու դրանց շուրջ առկա գրականության հետ:

Հայրենի է, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն իր գիտական ներուժով Ի դարի սկզբին առաջնակարգ տեղ է զբաղեցրել հայագիտության խնդիրների լուծման ասպարեզում: Դրան նպաստում էին հարյուրամյակների ընթացքում Մայր Աթոռում հավաքված փայլազիր և ձեռագիր գրքերի եզակի հավաքածուները: Գիտական այդ հսկայածավալ ներուժը Հայաստանի խորհրդայնացման փարիներին ազգայնացվել էր: Խորհրդային պետությունը, Եկեղեցուն զրկելով հոգևոր-կրթական իր հաստատություններից, պետականացրել էր հարյուրամյակների ընթացքում Էջմիածնում կուտակված հոգևոր-մշակութային արժեքները: Անցած 80 փարիների ընթացքում կրթությունն ու գիտությունն ամբողջովին առանձնացվել էին Հայոց Եկեղեցուց, թեև Գևորգյան Ճեմարանի նախկին շրջանավարտները գործում մասնակցություն էին ունեցել Պետական համալսարանի և Գիտությունների Ակադեմիայի հիմնումն աշխատանքներում:

Նրանց ավանդը հատկապես մեծ է եղել խորհրդային իշխանության առաջին փարիներին Հայաստանում գիտական օջախներ կազմակերպելու գործում:

Խորհրդային փարիներին Եկեղեցին զրկվեց գիտական կենտրոններ ունենալու հնարավորությունից: Այդ է պարծառը, որ, չունենալով իր կենտրոնները, Ի դարի Հայոց Վեհափառներն ամեն կերպ աշխատեցին օժանդակել Հայաստանի Հանրապետությունում գիտակրթական գործի զարգացմանը: Վազգեն Ա Վեհափառի կողմից ԳԱԱ-ին նվիրվեց

դպարան, բազմաթիվ արժեքավոր գրքեր և ձեռագրեր հանձնվեցին ի պահպանություն Մալբենադարանին և գիտական մյուս կենտրոններին: ԳԱԱ և Մաշպոգի անվան Մալբենադարանի գիտաշխատողների ներգրավումով իրականացվեցին Եկեղեցու համար կարելի մի շարք գիտահետազոտական ծրագրեր (Կանոնագրքի և Աստվածաշնչի գիտական բնագրերի հրատարակություն ևն.): Անհրաժեշտ է նշել, որ այնուամենայնիվ վիճակը որոշ չափով փոխվեց Գևորգ Զ Նայրապետի գահակալության շրջանից, երբ սկսվեց Մայր Տաճարի նորոգությունը, Գևորգյան ճեմարանը: Այս գործընթացի շարունակման մեջ հսկայական դեր կատարեց Վազգեն Ա Վեհափառը, միաժամանակ օգտակար լինելով Նայաստանում ստեղծված քաղաքացիական նոր գիտական հիմնարկների և մշակութային օջախների կայացմանը:

Երջանկափառ Նայրապետը վերականգնեց նաև Գևորգյան ճեմարանի ուսումնակրթական գրադարանը՝ այն ծառայեցնելով հոգևորականության նոր սերնդի պատրաստման գործին: Այդ շրջանի կարևորագույն ձեռնարկումներից դարձան Աստվածաշնչի բնագրի նոր աշխարհաբար թարգմանությունը և Մայր Աթոռի շուրջ համախմբված գիտնականների (Ն. Անասյան, Ս. Զոլանջյան, Պ. Նակոբյան և ուրիշներ) հայագիտական հրապարակումները Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածնում»:

Վազգեն Ա Վեհափառը Ալեք Մանուկյանի նյութական աջակցությամբ կարևոր քայլեր կատարեց Էջմիածնի թանգարանային համալիրի վերականգնման գործում, և 1982 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում բացվեց Ալեք և Մարի Մանուկյան թանգարանը՝ շարունակելով այդ գործում երանաշնորհ Գևորգ Դ-ի նրան հաջորդած Կաթողիկոսների ավանդները: Գևորգ Զ, ապա և Վազգեն Ա Նայրապետների գահակալության տարիներին Մայր Աթոռում հավաքվեցին նաև մեծ թվով ձեռագրեր, որոնց հիմքի վրա ստեղծվեց Մայր Աթոռի Նոր Մալբենադարանը:

Էջմիածնում Ի դարի ընթացքում, հատկապես Վազգեն Ա և Գարեգին Ա Կաթողիկոսների գահակալության տարիներին, հավաքվել էր բավականին թվով գրականություն, որը հիմնականում մատչելի էր միայն Մայր Աթոռի միաբանության մի մասին և լիարժեքորեն չէր ծառայում իր նպատակին:

Գարեգին Ա-ը ճեմարանական կրթությունը բավարար մակարդակի վրա դնելու իր ջանքերին զուգահեռ քայլեր ձեռնարկեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հայագիտական-աստվածաբանական կենտրոն ստեղծելու առաքելության մեջ: Նայաստանի անկախացման առաջին տարիներին, գիտական մի կենտրոն ստեղծելու նպատակով, Օշականում 1998 թ. բացվեց Ս. Մեսրոպ Մաշպոգ Դպրատունը, որտեղ Արագածուրի թեմի հովանու ներքո իրականացվելու էին գիտական աշխատանքներ և կազմակերպվելու էին գիտաժողովներ ու ցուցահանդեսներ¹:

Ի լրումն այս նախաձեռնության, ինչպես ասվեց, 2000 թ. հունիսին Գարեգին Բ-ը Վազգեն Ա-ի հիմնադրած և Գարեգին Ա-ի կողմից համալրված գրադարանին տեղ հատկացրեց Ալեք և Մարի Մանուկյան թանգարան-«Գանձարան» շենքի աջ թևի առաջին և երկրորդ հարկերում: Ստեղծվեց գրադարանային գործին տեղյակ մասնագետների մի խումբ, որը

¹ Տե՛ս «Էջմիածին», 1998, Ժ-ԺԱ, էջ 147-149:

ձեռնամուխ եղավ գրքերի դասակարգման և քարտագրման աշխատանքներին: Միաժամանակ, առաջիկայում կկառուցվի Կենտրոնի նոր շենք, ուր և կգործի գիտահետազոտական կենտրոն՝ համապարասխան աշխատասենյակներով, լաբորատորիաներով և ընթերցասրահներով, որոնք ապահովված կլինեն ժամանակակից տեխնիկայով: Գրադարանի համալրման աշխատանքներին զուգահեռ, գրադարանի աշխատակազմը սկսեց սպասարկել Մայր Աթոռի հոգևորականներին և Ճեմարանի ուսանողներին ու շրջանավարտներին: Գրադարանին են փոխվում աշխարհի փարբեր կողմերից Վեհափառի անունով սրացված գրքերը, ինչպես նաև գրքային ֆոնդը համալրվում է նոր լույս տեսնող գրականությամբ:

2000 թ. շուրջ 20 000 գիրք ունեցող Գարեգին Ա կենտրոնի գրադարանի ֆոնդերում այսօր հաշվվում է շուրջ 30000 միավոր գրականություն: Կենտրոնն ունի շուրջ 200 կտոր հնափայ գրականություն: Վերջին մեկ տարվա ընթացքում կենտրոնը համալրվել է շուրջ 4000 միավոր գնված գրականությամբ: Եթե այսպես շարունակվի, ապա մեկ տասնամյակ հետո այն կարող է լինել Հայաստանի լավագույն միջնադարագիտական և եկեղեցագիտական գրադարաններից մեկը:

Կենտրոնն ունի աշխատանքի երկու ուղղություն.

ա) Գրադարան: Կենտրոնի աշխատանքները մինչև այժմ հիմնականում ուղղվել են գրադարանի գրքերի քարտագրմանն ու հաշվառմանը, քարտարանների ստեղծմանը: Կենտրոնի մատենագեղանքն ավարտում են գրքերի դասակարգումն ու քարտագրումը: Այժմ քայլեր են ձեռնարկվում գրադարանում ներդնել գրքերի նկարագրման համակարգչային ծրագիր և կապեր հաստատել աշխարհի համանման այլ գրադարանների հետ: Գրադարանի ապագա ծրագրերի մեջ է մտնում գրադարանային ողջ ֆոնդի թվայնացումը և օպտիկական կապի հաստատումը ցանցի մեջ եղող աշխարհի կարևորագույն գրադարանների հետ:

բ) Գիտական կենտրոն: Այս կառույցում քայլեր ձեռնարկվեցին գիտական կենտրոնի գործունեությանը մասնակից դարձնել նաև Գևորգյան Ճեմարանի շրջանավարտներին: Ժամանակի ընթացքում կենտրոնը փորձեց իր նպաստը բերել Մայր Աթոռում գիտական հետազոտությունների և գիտաժողովների կազմակերպման գործին: Կենտրոնում ընդգրկված աշխատակիցները մի շարք հոդվածներ են հրատարակել «Էջմիածին» ամսագրում, նպաստել Ս. Էջմիածնում «Աստվածաշնչի գրքերի հայ մեկնությունների գրադարանի» շարքի առաջին երկու գրքերի լույսընծայմանը: Այժմ կենտրոնի առջև խնդիր է դրվել՝ ստեղծել հայ միջնադարյան կանոնական գրականությունը և Հայոց կաթողիկոսական վավերագիր ժառանգությունը հետազոտող գիտական կառույց: Այս նպատակով Կենտրոնը ձեռնամուխ է եղել ԺԹ դարի հայ կանոնագիտական մտքի ամենամեծ տեսաբան Վահան Բասպամյանի գիտական ժառանգության հավաքման և հրատարակման գործին: Կենտրոնի հովանո ներքո աշխատանքներ կատարվեցին հրատարակելու հայագիտական-եկեղեցագիտական այն աշխատությունները, որոնց լույսընծայումը ձգձգվում էր տպագրության համար անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով: Հրատարակվեցին ՀՀ ԳԱԱ-ի Պարմության ինստիտուտի գիտաշխատակից, պ.գ.դ. Վրեժ Վարդանյանի «Հայ Առաքելական Եկեղեցին պարմության քաղաքական խաչուղիներում (Դ-Ը դարերում)» և ՀՀ ԳԱԱ

Արվեստի ինստիտուտի գիտաշխատակից, արվեստագիտության դոկտոր Վիգեն Ղազարյանի «Խորանների մեկնություն» աշխատությունները և մի շարք այլ գործեր:

Կենսորոնն իր նպաստն է բերել նաև Մայր Աթոռում գիտաժողովների կազմակերպման գործում, աշխատելով Օշականում գրելով Մաշտոցյան Դպրարան կազմակերպած Մաշտոցյան ընթերցումների հետ միասին համակարգել մեզանում հայագիտական և եկեղեցագիտական հետազոտությունները: Գարեգին Բ-ի գահակալության տարիներին հրավիրվեցին մի շարք գիտաժողովներ, որոնք նպատակ ունեին համակարգելու եկեղեցագիտության մի շարք խնդիրների բնագավառում մեր գիտելիքները: Այդ տեսանկյունից ուշագրավ էին էջմիածնում հրավիրված «Քրիստոնեություն և իրավունք» միջազգային խորհրդաժողովը (Էջմիածին, 2000 թ.), Վիեննայի կանոնագիտական կենտրոնի հրավիրած գիտաժողովը (Ճադկաձոր, 2003 թ. սեպտեմբեր), Ս. Էջմիածնի հիմնադրման 1700-ամյակին նվիրված գիտաժողովը (Էջմիածին, 2003 թ. սեպտեմբեր), Գրիգոր Նարեկացու «Մարեան Ողբերգութեան» երկի գրության 1000-ամյակին նվիրված գիտաժողովը (Էջմիածին, 2003 թ. դեկտեմբեր):

«Գարեգին Ա» կենտրոնի և Գուգարաց թեմի նախաձեռնությամբ 2003 թ. հունիսին տեղի ունեցավ «Հովհան Օձնեցին և իր ժամանակը» գիտական կոնֆերանսը, որի նյութերը 2004 թ. սկզբին լույս տեսան ամսանձին հատրով, Կենտրոնի հրատարակությունների շարքում: 2004 թ. «Գարեգին Ա» կենտրոնը Մայր Աթոռի Տեղեկավարական համակարգի հետ համատեղ կազմակերպեց «Հայ մեկնողական գրականության դպրոցները» միջազգային գիտաժողովը, որի նյութերը շուտով լույս կտեսնեն: Ապագայում Կենտրոնը ծրագրում է մենագրությունների և պարբերականի հրատարակություն, գիտական սեմինարների կազմակերպում:

Գիտական կենտրոնը փորձում է իր աշխատանքները համակարգել ՀՀ ԳԱԱ հումանիտար ինստիտուտների և գրադարանի հետ: Բայց են ձեռնարկվում երևանում ԱՄՆ-ի դեսպանության միջնորդությամբ Կոնգրեսի գրադարանի հետ գրքերի փոխանակություն սկսելու համար:

«Գարեգին Ա» Կենտրոնի աշխատանքներին աջակցում են Գևորգյան Ճեմարանի ուսանողությունն ու փնօրինությունը, Մայր Աթոռի միաբանությունը:

Կենտրոնի կարևոր ձեռքբերումներից է բարեհիշատակ հայագետ, Գևորգյան Ճեմարանի պրոֆ. Պողոս Խաչատրյանի անձնական գրադարանի հայագիտական հարվածի նվիրավորությունը «Գարեգին Ա» կենտրոնին:

Կենտրոնի գրադարանը ծառայում է Մայր Աթոռի միաբաններին և Ճեմարանի ուսանողությանը: Նոր շենքի կառուցումից հետո կենտրոնից անկասկած կսկսեն օգտվել Հայաստանի Հանրապետության և արտասահմանի հայագետներն ու միջնադարագետները:

Կենտրոնն այժմ ունի ավելի քան 200 ընթերցող: